ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
"ՀՐԱԶԴԱՆԻ N 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ" ՊՈԱԿ

2302, ք. Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 1/4, էլ.փոստ
hrazdan school7@mail.ru

N 17
07. 04. 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ինֆորմատիկայի /5 դասաժամ/, ֆիզկուլտուրայի/29 դասաժամ/, ռուսաց լեզվի /23 դասաժամ/, տեխնոլոգիայի / 4 դասաժամ, տղաների խումբ/ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված փաստաթղթերը ընդունվում են մինչև 2021թ. ապրիլի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ որ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 22-ին՝ ժամը 15:00-ին, Կոտայքի մարզի Հրազդանի հ.7 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր ¼:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ**

Digitally signed by ASATRYAN HASMIK 5109570450
Date: 2021.04.07 12:03:49 AMT

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի ի մարզի «Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (29 դասաժամ), ռուսաց լեզվի (23 դասաժամ), տեխնոլոգիայի /4 , տղաների խումբ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 22-ին՝ ժամը 15:00-ին, Կոտայքի մարզի Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր 1/4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 23-76-97 հեռախոսահամարով: